**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ԴԴՄԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դդմաշեն համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, գ.Դդմաշեն, 098 661354 ddmashen.gegharquniq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 15

## ՀՀ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԶՈՀՎԱԾ ԴԴՄԱՇԵՆՑԻՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ավագանու քննարկմանը ներկայացվեց Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված Սամվել Դավթի Գրիգորյանի ու Սիմոն Մարսելի Սիմոնյանի ընտանիքներին Մայիսյան հաղթանակների առթիվ դրամական օգնություն տալու մասին որոշման նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և 22-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով՝

### ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Մայիսյան հաղթանակների առթիվ համայնքի սոցիալական այլ ծրագրերի /10.07.01/ 4729 հոդվածից տալ դրամական օգնություն Հայաստանի Հանրապետության սահմանների պաշտպանության ժամանակ զոհված.

1/ Սամվել Դավթի Գրիգորյանի ընտանիքին – 50.000 /հիսուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել զոհվածի այրուն՝ Թերեզա Վահանի Մանուկյանին:

2/ Սիմոն Մարսելի Սիմոնյանի ընտանիքին – 50.000 /հիսուն հազար/ դրամ: Գումարը տրամադրել զոհվածի հորը՝ Մարսել Սարիբեկի Սիմոնյանին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -4 Դեմ -0 Ձեռնպահ -1

1. Ավետիսյան Տիգրան
2. Կիրակոսյան Հրահատ

1. Հովհաննիսյան Գուրգեն

3. Ղարիբյան Էդիկ

4. Մելքոնյան Զավեն

Համայնքի ղեկավար՝ Ավետիս Ավետիսյան